



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԱՐԱՊԱՆՔԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ Ժ/Պ

Handwritten signature



Ա. ՄՐԵԱՍՅԱՆ

«18» 04 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 34

Ձեռնարկողը՝

«ԷՅ ԷՄ ԹԻ» ՍՊԸ

ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան,
Լեռնագործների 17/33

Գործունեությունը՝

**Արամուսի բազալտի հանքավայրի «ԷՅ ԷՄ ԹԻ» տեղամասի
2018-2019թթ. երկրաբանական ուսումնասիրության
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ**

«Կոփայի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Handwritten signature

Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 34

«18» 04 2018թ.

«ԷՅ ԷՄ ԹԻ» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի 2018-2019թ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նախնական գնահատման հայտ

Պատվիրատու՝	«ԷՅ ԷՄ ԹԻ» ՍՊԸ
Նախագծող՝	«ԷՅ ԷՄ ԹԻ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ.
Տեղադրման վայրը՝	ՀՀ Կոտայքի մարզ
Գործունեության կատեգորիան	/Գ/ կատեգորիա

«ԷՅ ԷՄ ԹԻ» ՍՊ ընկերությունը համաձայն ներկայացված նախնական գնահատման հայտի նախատեսում է ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի տարածքում 2018-2019թ իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Արամուսի բազալտների հանքավայրի «ԷՅ ԷՄ ԹԻ» տեղամասը վարչական առումով գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Արմյանի ենթաշրջանում և տեղակայված է Արամուս գյուղից մոտ 3կմ հարավ-արևելք՝ գյուղատնտեսական նպատակներով անօգտագործելի 4.2հա տարածքում: Տեղամասը տեղադրված է 1500-1600մ բացարձակ նիշերի վրա:

Մոտակա բնակավայրերն են Կամարիս, Բալախովիտ, Մայակովսկի, Նոր Գյուղ, Ակունք, Կաթնաղբյուր գյուղերը: Հանքավայրի շրջանի խոշորագույն քաղաքաշինական միավորը Արմյան քաղաքն է, որի հարևանությամբ է անցնում Երևան-Սևան մայրուղին:

«ԷՅ ԷՄ ԹԻ» տեղամասը գտնվում է բարենպաստ ճանապարհա-տրանսպորտային պայմաններում: Տեղամասից մոտ 2.7կմ արևելք անցնում է Արմյան - Գեղաշեն - Ջովք մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհը, որի հետ տեղամասը կապված է մոտ 2.3կմ երկարությամբ գրունտային ճանապարհով:

«Էյ Էմ Թի» տեղամասը հանդիսանում է 2010թ. հետախուզված Արամուսի բազալտների հանքավայրի «ԱՐՄԵՆԻՈՒՍ» տեղամասի հարավ-արևելյան շարունակությունը և զբաղեցնում է 4.2հա գյուղատնտեսական նպատակների համար անօգտագործելի տարածք:



«Էյ Էմ Թի» ՍՊ ընկերությունը Արամուսի բազալտի հանքավայրի «Էյ Էմ Թի» տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն իրականացվելու է հետևյալ մեթոդաբանությամբ և ծավալներով.

- տեղագրական հանույթ և երկրաբանական քարտեզագրում 1:1000 մասշտաբի 20 հա
- հորատանցքերի հորատում, փաստագրում և նմուշարկում 15.0 գծ.մ
- լաբորատոր ուսումնասիրություններ
- ռադիոմետրիական աշխատանքներ
- հիդրոերկրաբանական և ինժեներա-երկրաբանական դիտարկումներ
- հաշվետվության և ՏՏՀ-ի կազմում

Նախատեսվող գործունեության վնասակար բացասական ազդեցությունները նվազեցնելու կամ մեղմելու նպատակով նախատեսվում են մի շարք միջոցառումներ:

- Նավթամթերքների պահեստավորում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում, որին տրվում է համապատասխան թեքություն որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի հավաքող բետոնապատված փոսը:

- Օգտագործված յուղերը և քսայուղերը հավաքվում են տարաների մեջ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:

- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն:

- Կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր:

- Արտանետվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :

- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակները հանքախորշերը լցակույտերը , մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհը և այլն) ինտեսիվ ջրում չոր և շոգ եղանակներին :

-Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով:

-Խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

Արամուսի բազալտի հանքավայրի «Էյ Էմ Թի» տեղամասի ուսումնասիրության ընթացքում «Էյ Էմ Թի » ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝

- մթնոլորտ աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ:

- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ տարին մեկ անգամ;

Մթնոլորտ աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական մոնիթորինգի համար նախատեսվում է տարեկան մասնահանել 100 հազար դրամ :

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո կկատարվեն ռեկուլտիվացիոն աշխատանքներ:

Եզրահանգում՝ 'ԷՅ ԷՄ ԹԻ' ՍՊԸ կողմից ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի տարածքում 2018-2019թ իրականացվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում նախնական գնահատման հայտով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև Արամուս համայնքում տեղի ունեցած երկու հանրային քննարկումների



արդյունքները, որով համայնքը տվել է իր դրական կարծիքը նախատեսվող գործունեության իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումների և սոցալ-տնտեսական ծրագրի պահանջներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:

3. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում առաջացած շինադրի (կենցաղային ադրի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, ջրի, օդի վերահսկման աշխատանքներ, և արդյունքները ներառել մոնիտորինգի պլաններում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԷՅ ԷՄ ԹԻ>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի 2018-2019թ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝



Michael

Ա. Մինասյան